



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

ք. Գավառ Նալբանդյան 116  
Հեռ. /0264/2-20-81. 2-38-01

« 19 » փետրվար 2013թ.

N 122

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ**


Մեծարգո պարոն Գրիգորյան

Համաձայն Ձեր 01.02.2013թ. թիվ 16-Ա որոշմամբ հաստատված ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013թ.-ի հիմնական միջոցառումների պլանի, ս.թ. ապրիլի 18-ին նախատեսված է անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի խաղաղից ռազմական դրության փոխադրման ժամանակ» թեմայով:

Ներկայացնում եմ ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման վերաբերյալ Ձեր որոշման նախագիծը և ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը:

Առդիր 4 թերթ:

փ/ծ գնդապետ



Մ. Բարսեղյան

Գեղարքունիքի մարզպետարանի  
ԲՆԿԱՅԻՆ ՔՐԿԱՐԱՐ  
19 02 2013թ.  
Մտերմի 808 13

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ  
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՌԻՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով, և համաձայն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013թ. հիմնական միջոցառումների պլանի ս.թ ապրիլի 18-ին իմ ղեկավարությամբ անցկացվելու է հրամանատարաշտաբային ուսումնավարժություն «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի խաղաղից ռազմական դրության փոխադրման ժամանակ» թեմայով:

Նշված ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով

**Որոշում եմ**

1. Ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով.

ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ

փ/ծ գնդապետ Մ.Բարսեղյան մարզային փրկարարական վարչության պետ,  
անդամներ

փ/ծ փոխգնդապետ Հ.Աբրահամյան մարզային փրկարարական վարչության պետի  
տեղակալ

փ/ծ փոխգնդապետ Գ. Մանուկյան Սևանի հրշեջ փրկարարական ջոկատի  
հրամանատար,

փ/ծ մայոր Ռ. Օհանյան Ճամբարակի հրշեջ փրկարարական ջոկատի  
հրամանատար,

փ/ծ ավ. լեյտենանտ Վ.Գորոյան մարզային փրկարարական վարչության հրահանգիչ:

2. Ռիսումնավարժությանը ներգրավել՝ մարզային քաղաքացիական պաշտպանության ծառայությունները, տարահանման հանձնաժողովը, մարզային փրկարարական վարչությունը, ք. Սևան և ք. Ճամբարակ համայնքների քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմը:

3. Ռիսումնավարժության ղեկավարման շտաբի պետ Մ. Բարսեղյանին՝

- մշակել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլան և մինչև ս.թ. փետրվարի 22 ներկայացնել իմ հաստատմանը ;
- ապահովել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև ս.թ. ապրիլի 3-ը ներկայացնել իմ հաստատմանը;
- կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց նախապատրաստումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի:
- ապահովել համագործակցությունը ուսումնավարժությանը ընդգրկված համայնքների հետ ուսումնավարժության անցկացման հարցերում:
- մարզային փրկարարական վարչության ծառայողների կազմից ստեղծել միջնորդների խումբ:
- ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև ս.թ. ապրիլի 11-ը:

4. Մարզպետի տեղակալ Մ. Մանուկյանին՝

- Ապահովել գործնական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:
- նախապատրաստել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկը և մինչև ս.թ. մարտի 28 –ը ներկայացնել հաստատման:

5. Ռեսուրսավարժության մասնակիցներին՝

- ճշգրտել համապատասխան քաղաքացիական պաշտպանության պլանները;
- ուսումնավարժությանը նախապատրաստման հարցերով սերտորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ;
- պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին

6. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել փոխմարզպետ Մ. Մանուկյանին:

ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Հաստատում եմ»

ՀՇՈՒ ղեկավար, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

Ռ. Գրիգորյան

«\_\_\_» \_\_\_\_\_ 2013 թ.

ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ


ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետներ	Պատասխանատու կատարողներ	Նշում կատարման մասին
1	2	3	4	5
<b>I. Փաստաթղթերի մշակում</b>				
1.	Ելակետային տվյալների որոշում՝ անցկացման վայր, մասնակիցների կազմ, մտահղացում, անցկացման կարգ	Մինչև 20.02	Գեղարքունիքի մարզպետ, ՄՓՎ պետ	
2.	Կազմակերպման և անցկացման վերաբերյալ Ուսումնավարժության ղեկավարի հրամանի մշակում	Մինչև 19.02	ՄՓՎ պետ	
3.	Մտահղացման մշակում (սխեմա, բացատրագիր)	Մինչև 27.02	Ղեկավարման շտաբի պետ	
4.	ՀՇՈՒ անցկացման պլանի մշակում	Մինչև 06.03	Ղեկավարման շտաբի պետ	
5.	ՀՇՈւ գործնական միջոցառումների պլանի մշակում	Մինչև 08.03	Ղեկավարման շտաբի պետ	
6.	ՀՇՈՒ իրավիճակի զարգացման պլանի մշակում	Մինչև 09.03	Ղեկավարման շտաբի պետ	
8.	ՀՇՈւ միջնորդական կազմի անհատական պլանների մշակում	Մինչև 11.03	ՀՇՈւ միջնորդական կազմ	
9.	ՀՇՈւ ղեկավարման կազմակերպման սխեմայի մշակում	Մինչև 11.03	Ղեկավարման շտաբի պետ	
10.	ՀՇՈւ փաստաթղթերի համաձայնեցում ՀՀ ԱԻ ՓԾ ՕԿԿ հետ	Մինչև 29.03	Ղեկավարման շտաբի պետ	
11.	ՀՇՈւ փաստաթղթերի հաստատման ներկայացում	Մինչև 03.04	Ղեկավարման շտաբի պետ	
<b>II. Ղեկավար և միջնորդական կազմի նախապատրաստում</b>				
12.	ՀՇՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի	Մինչև	Ուսումնավարժության	

	ուսումնասիրում	08.04	ղեկավար, Ղեկավարման շտաբի պետ	
13	Միջնորդների հրահանգավորում	Մինչև 08.04	Ղեկավարման շտաբի պետ	
12	Կապի վարժանք ղեկավար կազմի հետ	04.04	Ղեկավարման շտաբի պետ	
III. Ուսուցանվողների նախապատրաստումը				
14	Վարժանքի անցկացում Ճամբարակ քաղաքի տարահանման հանձնաժողովի հետ «Համայնքից մասնակի տարահանման կազմակերպումը» թեմայով	02.04	Ճամբարակի քաղաքապետ	
15	Վարժանքի անցկացում Սևան քաղաքի տարահանման հանձնաժողովի հետ «տարահանված քնակչության ընդունման, տեղաբաշխման և կենսապահովման կազմակերպումը» թեմայով	03.04	Սևանի քաղաքապետ	
16	Անձնակազմին անվտանգության կանոնների հետ ծանոթացում և ստուգարքի ընդունում	07.04	Ստորաբաժանման հրամանատար	
IV. Ուսումնավարժության գործնական տեղամասերի նախապատրաստում				
17	Ուսումնավարժության վայրի տեղազննում	Մինչև 07.03	Ուսումնավարժության ղեկավար	
18	Տեղամասերի նախապատրաստում	Մինչև 08.04	Ղեկավարման շտաբի պետ	
19	Կառավարման կետերի կահավորում	Մինչև 07.04	Ուսումնավարժության ղեկավար Ղեկավարման շտաբի պետ	
20	Կապի միջոցների ծավալում	Մինչև 15.04	Ղեկավարման շտաբի պետ	

Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ

փ/ծ գնդապետ

 Մ. Բարսեղյան